աւելի ողողեց Փերենսկի թղթադրամներով՝ վերածելով Ռուսիան երկրի մը ուր սուզապրուստը (caro–viveri) ամենէն ահաւորն է և դրամը ծայրայեզօրէն կորուսած է իր արժէքը։

Գործակցախումբերը՝ յեղափոխութեան ժամանակ՝ պոլշեվիկներուն հալածանաց ենթարկուեցան, բայց բարեբաղդաբար գործակցախումբերու ներկայացուցիչները դիւրաւ կրցան պոլշեվիկներուն հակկշռել թէ ազգայնականութեան (nationalisation) գաղափարը ոչ երբեք կրնայ գործակցական շարժման յատկացուիլ։

Բայց յամենայն դէպս՝ գործակցութիւնը հիմայ պոլշեվիկեան թոհբոհին մէջ միակ կենսական ուժն է, որուն վրայ Ռուսիան կրնայ իր վերածնութեան յոյսը դնել. «Ճշմարիտ ռամկավարութիւն մը կը ստեղծուի և կը կրթուի գործակցութեան ծոցին մէջ, և այս անոր համար որ Պետութեան մը աւերակներուն մէջ անխախտ և անսասան կանգնած է գործակցութեան գէնքը, այնպէս որ ինքն է որ ներկայ ընկերութեան ամբողջական կեանքը կ՚ընդգրկէ»։

Կը շնորհաւորենք հայ ուսուցչապետին իր գնահատելի արտադրութեանց համար՝ մաղթելով որ շնորհէ մեր ազգային տնտեսական գիտութեան աւելի մեծ մղում մը և աւելի ընդարձակ ու մանրակրկիտ երկասիրութիւն մը Ցնտեսական Հայաստանի վրայ...։

ՄԻՀՐԱՆ ՇԵՒԻԿԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՕՂԼՈՒ ԵՐԳԵՐԸ

(ՓՇՐԱՆՔՆԵՐ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ժողովրդական բանահիւսութիւնը շատ աղքատ է Ջուղահայերի մէջ. համաբեռ չկայ նրանց մէջ ժողովրդական–ինքնուրոյն երգեր – սիրային, պանդխտի, երգիծական, սգոյ, պարի և այլ լիրիքական – հովուերգական տաղեր, ինչպէս և զրոյցներ հէքեաթներ, առակներ, հանելուկներ և այլն։ Այդ հանգամանքը պիտի բացատրուի նրանով, որ հայերը զարերից ի վեր ապրելով պարսիկների հետ, կորցրել են իրենց ազգային առանձնայատկութիւններից շատ բան և՝ իւրացրել են այն, ինչ որ պարսկական է։

Այսպէս է Նոր–Ջուղան։ Սակայն ընդհակառակը, դրա փոխարէն Նոր–Ջուղայի Փէրիա և Զուլմահալ գաւառները հարուստ են աշուղական երգերով։ Նրանք տուել են իրենց ծոցերից մի քանի ժողովրդական բանաստեղծ – երգիչներ, որոնք ապրելով ժողովրդի մէջ, ժողովրդի սրտին մօտիկ, արտայայտել են նրա զգացմունքներն ու խոհերը, իղձերն ու յոյզերը, ուրախութիւնն ու վիշտերը, զանազան մօտիւներով և ելևէջներով։

Սակայն ցաւելով պիտի նկատենք, որ նրանց մասին ոչինչ յիշուած չէ մեր բանահիւսութեան պատմութեան մէջ, և մինչև այսօր ոչ նրանց երգերն է հաւաքուած և ուսումնասիրուած և ոչ էլ նրանց վերաբերեալ կենսագրական տեղեկութիւններ լոյս են տեսած. նրանք գրեթէ մոռացուած են։ Մինչդեռ նրանք իրենց ժամանակին, իրենց երգերով մեծ դեր են խաղացել և հռչակ ու պատիւ վայելել։

Թէև ժողովուրդը սրբութեամբ պահել–պահպանել է նրանց անունները և նրանց

© National Library of Armenia

երգերից շատերը, բայց գնալով փոփոխութեան և աղաւաղումի են ենթարկւում այդ երգերն և հետզհետէ մոռացւում են և ոչնչանում։

Անհրաժեշտ է ուրեմն, այժմեանից իւնամքով գրի առնել բերանացի բանահիւսութեան այդ փշրանքները և լուսաբանել, քանի դեռ կորսուած չեն։

Ահա այդ տեսակէտն ի նկատի ունենալով՝ մենք առաջին անգամ ուսումնասիրութեան նիւթ ենք դարձնում Ցարութիւն Օղլի աշուղը, որի մասին պէտք եղած տեղեկութիւնները ձեռք ենք բերել ձեռագիր տետրակներից և նրա ծանօթ ծերունիների պատմածներից։

Ցարութիւն Օղլու կեանքը։ Երգիչ Ցարութիւն Օղլին ծնուել է Զարմանալ գաւառի Անհագարադ գիւղում. 1810-20-ական թուականներին։ Մարմինն ամփոփուած է Մամուքա։ Արհեստով երկրագործ է եղել։ Ունեցել է գիւղում, յայտնի գիտնական Տէր-Յովհաննէսի մօտ, որը մեծ ազդեցութիւն է ունեցել իր աշակերտի վրայ։ Այնուհետև Ցարութիւնն իրենց գիւղ եկող աշուղների մօտ գնալով՝ ուշադրութիւն է դարձնում իւրաքանչիւր աշուղի խաղի վրայ և շուտով սովորում է աշուղութեան արուեստը։ Սակայն նրա աշուղութեան արուեստի զարգացման գործում իր դրոշմը դրել է աշուղ Ղուլ Յովհաննէսը, որի մօտ Ցարութիւնն աշակերտել է մի քանի տարի և ապա՝ գերազանցել է իր ասուցչին։ Այնուհետև նա ուսման տենչով անցնում է Ս. Էջմիածին և այնտեղից էլ գնում Ս. կարապետ ուխտի՝ աշուղութեան շնորհք ստանալու համար։ Նա գիշերը երազ է տեսնում։ Սրբերը նրան մի բեռ եփած կորեկ են տալիս, որ տանի սարի գագաթը. նա շալակում է կորեկը և բարձրանում սարը, բայց կէս ճանապարհին ցած է ընկնում և կորեկը ցրիւ է գալիս, սակայն նա շուտով կորեկը հաւաքում է մի այլ կաշէ տոպրակի մէջ և բարձրանում սարի գագաթը։ Այդ վերելքն է լինում, ըստ իր կարծիքին, Ս. կարապետից ստացած աշուղութեան շնորհքը։

Դրանից յետոյ՝ նա վերադառնում է հայրենի գիւղը։ Գիւղի ժողովուրդը դիմաւորում է նրան և մեծ պատուով ընդունած իր աշուղին։ Նա իր հայրենակիցներին, իբրև նուէր, սաղաֆէ խաչեր է բերում Ս. Էջմիածնից։

Այսքանը միայն յայտնի է մեզ Ցարութիւն Օղլու մասին, իսկ թէ ինչպիսի՞ շրջանում և միջավայրի մէջ զարգացել է նրա տաղանդը, իբրև աշուղ երգիչ — այդ մասին հաստատ չգիտենք ոչինչ։ Յայտնի չէ մեզ նոյնպէս նրա կեանքի գոնէ բնորոշ գծերը։ Միայն այսքանը յայտնի է, որ երբ նա վերադառնում է Ս. Էջմիածնից, շուտով տարածւում է նրա հռչակը, և այնուհետև նա ձեռք առնելով չօնգուրը, ընկնում է գիւղից գիւղ, երգեր է յօրինում և մրցում գիւղերի աշուղների հետ։ Նա շուտով աչքի է ընկնում իր տաղանդով։ Ցանպատրաստից երգեր է յօրինում և զարմանք պատճառում ժողովրդին։

Այդ երգերի փշրանքները, որոնք այսօր ունինք մեր ձեռքի տակ՝ ցոյց են տալիս, որ նա իր ժամանակի գրագէտ մարդկանցից մէկն է եղել և մոտաւորապէս աւելի բարձր կանգնած լինելով՝ կարողացել է իր ապրած միջավայրում որոշ դեր խաղալ և յարգանք ու համակրանք վայելել։

Ցարութիւն Օղլու երգերը։ Պարսկահայ աշուղների մէջ ամենատաղանդաւորն է Ցարութիւն Օղլին, որ թողել է բաւական թւով թէ թուրքերէն և թէ հայերէն լեզուով երգեր, որոնք հաւաքւած են մի «Դաւթար»ի մէջ, և որոնց կարելի է բաժանել մի քանի սէրիաների — սիրային, պանդխտի, կրօնական, խրատական և այլն։

Իրաւ է Ցարութիւն Օղլու երգերը զուրկ են գեղարուեստական շքեղութիւնից և շուտին ո՛չ պարսիկ մեծ քանաստեղծների՝ Հաֆըզի, Սաատի, ու մանաւանդ Օմար-Խայամի երգերի հմայիչ գեղեցկութիւնը և ո՛չ էլ մեր միջնադարեան տաղերգուների՝ Նահապետ Քուչակի, Մկրտիչ Նաղաշի, Յովհաննէս Թլկուրանցու գրուածքների խորութիւնը, սակայն և այնպէս իրենց ներքին և արտաքին անպաճոյճ կառուցուածքով արդ-

© National Library of Armenia

ժանի են առանձին ուշադրութեան։ Այժմ ծանօթանանք այդ երգերի հետ։

Սիրոյ երգեր։ Իրև երգիչ, Ցարթին Օղլին, ունի իր ուրոյն, առանձնայատուկ երազների, յոյսերի և յոյզերի, իդէալների և զգացումների հարազատ աշխարհը. դա սիրոյ աշխարհն է — մաքուր, իդէալական և երազկոտ աշխարհը, ուր նա այլազան դրւազներով և գոյներով երգում է իր սիրած եարին, նրա գեղեցկութիւնը։ Այդ երգերից երևում է, որ նրա սիրած եարն աննման է, չկայ «Գեօզալների» մէջ նրա նմանը։ Աւելին։ Եարը նրա անբողջ կեանքն է, ամբողջ երջանկութիւնը։ Եւ նա համակւած սիրոյ վառ զգացումով, լարում է իր իր քնարը, զարկում է նրա լարերին և սիրարուղխ կանչում է իր աննման եարին, որ միասին ապրեն մինչև հարիւր տասը տարի.

«Ցամեռրդ աբրիչում ֆթաթ զառով քաչած
Գլուխդդ պատուական ոսկէ սանդուղ տաչած.
Իմ եար ապի՛, արի՛ բարով, հազար բարի
Խնդանք իրար խտուր չուր հարիւր տաս տարի»։

Այնուհետև երգիչը գունեղ գոյներով նկարագրում է եարի աննման գեղեցկութիւնը. գեղեցիկ են նրա շրթունքները, ունքերը հիլալ, աչքերը սև, ականջները զուլալ, թշերը կարմիր վարդ–նոնագոյն, երեսը ճերմակ ծով, լեզուն բլբուլ, կուրծքը մարմար, մէջքը բարակ, չկայ «Հողեղինում» նրա նմանը.

«Թիկունքդ թաղտ ազիզ՝ ինչ աննման ես դու,
Չկայ հողեղինում, հուրի լզման ես դու.
Մէջկդդ բարակ կանանչ՝ սալբոլվան ես դու
Գեօզալների միջին, ուրախ խնդման ես դու»։

Եարի աննման այդ գեղեցկութիւնը գերել է նրա խելքը, սիրտը կաշկանդել, ձգել է սիրոյ երգի մէջ, և նա սիրոյ զգացմունքի բուռն թափով գեղած, երգեր է հնչեցնում՝ սիրարորբոք, խանդավառ երգեր.

«Էչիսդ ջանիս ծակծակումայ
Դարդն չորացած փշի պէս.
Աչքերդ սիրտս է կտրատում
Սիրած ալմաստ չուչի պէս.

Ունքերդ խելքս այ տանում
Թմրացնումայ մախչուչի պէս,
Գցում է ինձնէ բիխաբար
Թուլացնումայ բիյուչի պէս»։

Եւ նա օրհնում է այն հօրն ու մօրը, որ ծնել են այնպէս մի աննման եար.

«Բո հօրն ու մօրն ռահմաթ՝
Որ ծնեցան քեզ պէս նահմաթ»։

Ու սիրոյ կրակը երգչի հոգու մէջ օրէց օր արծարծւում, հրդեհ է դառնում և նա էքստազ ոգևորութեամբ հնչեցնում է սիրոյ երգն աւելի ուժգին։

«Աչքերդ ինձ խափայ տալիս
Սրտիս մէջն ծափայ տալիս.
Միւս ոսկոռէս թափայ տալիս
Էդ քո խաղալն նազելի։

Ունքերդ մախչուչայ բերում
Կոտրած սիրտս յուչա բերում
Բիյուչ մարդին յուչա բերում
Քո բաւև տալն նազելի.»։

Բայց երգիչը զգում է, որ եարն օտարացել, մի «վայրենի զուշ» է դառել ու նետով «Ջիգարին» տալիս, և նա սրտայոյզ շեշտով ողբում է անգութ եարին.

«Էլ չես մտիկ անում հալիս
Նետով Ջիգարիս ես տալիս.
Ինձնէ երկար ման ես գալիս
Մին վայրենի զուշաս ելէլ»։

Եւ երգիչը այնուհետև՝ թախծոտ սրտով ձեռք է առնում սազը ու պանդխտութեան գնում, որպէսզի իր վիշտը ամոքւի, բայց օտար աշխարհում էլ նա հանգիստ չունի, եարի սէրը տանջում է իրեն.

«Քանի քեզնէ հեռացէլամ
Էլ հալ ու զօվաթն չունիմ,
Սրտովս քեզ կամեցէլամ
Ուրիշի ճնաթն չունիմ։

Քեզի նման հայոց ցեղում
Չեմ գտանում գաւառ գեղում,
Չեմ դիմանում դարիք տեղում
Առանց քեզ թաղաթն չունիմ»։

Եւ նա եարից հեռու, միայնակ, վշտերի

© National Library of Armenia

մարմաջով համակված, կարօտագին սիրտն է բաց անում եարին և խնդրում, որ այլևս մի ճար անի.

«Սիրտդ ձեռնէն ցաւոտէլամ
Մի՛ տալ դարդ ու սուր ինձ աղջիկ,
Տեսդ համար կարօտէլամ
Եկ դու արա ճար ինձ աղջիկ»։

Սակայն անողոք եարը դարձեալ անտարբեր է մնում, չէ հասկանում երգչի սիրտը, զգացմունքը և նրա համար պատրաստում է նորանոր տանջանքներ... բայց երգիչն այլևս չի կարողանում դիմանալ և նա վերջապէս կէս՝ յանդիմանութեան և կէս՝ աղաչանքի ձևով դիմում է եարին այսպէս.

«Խօսումամ, խօսումամ, դէ գ�՝ չես խօսման,
Ախր չահանին ինչայ, չան քեզի դուրբան
Էշիցդամ կրակումամ, մարդ չե՞ս տեսման.
Տես, մին դարդիս համար քան քեզի դուրբան»։

Վերջապէս եարը խղճում է նրան և ամուսնանում։ Երգիչը անհուն երջանկութեան հասած՝ գովում է եարին։ Նրա հօրը «բարի պտղաբեր մի ծառ է», որին նա պահում–պահպանում է գուրգուրալով և նրա համար ամեն ինչ «մատաղ» անում.

«Դու բարի պտղաբեր ծառիր
Էդ քո բարի հային մատաղ,
Քեզ երանի որ ինձ առիր
Էդ նման աղբային մատաղ.

Աչքդ զուլալ, ինքդ կամար
Լոյս երեսդ չամն ու դամար,
Զոյգ միասին կապած կամար.
Սև հիլալ ունքերիդ մատաղ»։

Սիրային այս երգերի մէջ հարազատութեամբ պատկերացնում է երգչի անկեղծ հոգին և նրա բոլոր սիրային երգերի մէջ դուք կը գտնէք այդ Ծոյն անկեղծ Ոգին։ Ահա սիրային մի այլ նմուշ.

«Մինգամ որ քեզ չեմ տեսանում
Ի սրտէ հոգէցամ հանում,
Քաղցր լեզուէդ չեմ կշտանում
Բերնիդ քեալամին զուրբան»։

Եւ այսպէս մի շարք սիրային երգեր ունի Ցարութիւն Օղլին, մէկը միւսից աւելի գեղեցիկ, մէկը միւսից աւելի անկեղծ և գրաւիչ։

Դարդերի երգեր։ Բացի սիրային երգերից, Ցարութիւն Օղլին ունի նաև մի քանի պանդխտութեան երգեր, որոնցից միայն մէկն ունինք մեր ձեռքի տակ։ Նրա մէջ, երգիչը սրտառուչ մօտիւով նկարագրում է դարերի դրութիւնը, որ դարից – դուրբաթ աշխարհում «վաթանից թառ ընկած ղրի նման», ոչ մի տեղ մխիթարութիւն չունի, մինչև անգամ՝

«Դարիր մարդս եթէ ծաղկած ծառ ելնէր,
Մաշկիսնէրում կանթեղի պէս վառ ելնէր,
Գօգիքն թրմաալ ու կապէն զառ ելնէր,
Իրա համար քանդած բաշի նման է»։

Դարիբութեան մէջ նրա համար ամեն ինչ «հարամ լաշի նման է», նրա աչքերուն ամեն ինչ դառն է, նոյն իսկ

«Դարիր մարդս՝ եթէ որդւոյ տեղ սիրես,
Ախիրն մին խօսքով իւր սիրտն կերես».

Աւելին։ Օտար երկրում, դարիր մարդը մի ծառայ է, – որի առաջը եթէ խաղաս, խնդաս, ծիծաղես, էլի նրա համար «դարդաշի» նման է, որովհետև

«Դարիր մարդուս՝ սիրտն քանդած աւեր է,
Առէջկամն գետեր, ծովեր, նաւեր է».

Եւ այդպէս դարիրը՝ սիրտն աւեր, խելքը գլխիցը թռած, աչքերը լացով լցուած, ախ քաշելով օրերն է մթնեցնում։

Կրօնական երգեր։ Ցարութիւն Օղլին ունի նաև յանգաւոր մի քանի բանաստեղծութիւններ, որոնց մէջ նա, միջին դարերի կրօնամիստիկ բանաստեղծ՝ Գրիգոր Նարեկացու ջերմեռանդութեամբ և ջերմ հայցուածքներով աղօթում է Ֆրիստոսին և աղաչելով իր մեղքն է լալիս.

«Վա՛յ ինձ վա՛յ, վա՛յ իմ մեղացն
Ցուսացելամ չարին, մեղայ քեզ Աստուած.
Զունիմ զգալի արտասուս լացն
Մեռացելամ իմ յեսի տարին, մեղա քեզ Աստուած»։

© National Library of Armenia

Այսպէս նա իրեն շատ մեղաւոր է համարում, դիմում է Աստծուն և արտասուալից թողութիւն է աղերսում.

«Լոյս Քրիստոս քեզ ունիմ լոյս,
Եւ դու ողորմաս ինձի տէր.
Զար անիրաւ մեղուցելոյս
Դու թողութիւն տաս ինձի տէր։

Թողութիւն տաս իմ մեղացն
Զդշնում արտասուս և լացն.
Շնորհես անմահութեան հացն,
Դու տաս քո սուրբ մասն ինձի»։

Մի այլ տեղում ողբում է Քրիստոսի գերեզմանի վրայ, իսկ մի ուրիշ տեղում նա երգի նիթ է շինում Յովհաննու Մկրտչին։

Բացի սրանցից, Յարթուն Օղլին թողել է 127 տնից բաղկացած մի գողտրիկ ոտանաւոր, որ կրում է «Ցաղ արարչագործութեան աշխարհի կամ համառօտ պատմութիւնը, Աստուածաշունչ սուրբ գրոց» վերնագիրը, որով նա մեզ տալիս է Աստուածաշնչի համառօտ պատմութիւնը, սկսելով աշխարհի ստեղծագործութիւնից։ Այդ ոտանաւորից երևում է, որ Յարթուն Օղլին տեղեակ է եղել նաև Ս. Գրքին, որից նա նիւթեր է վերցնում և երգեր հիւսում։ Յետոյ յայտնի է «վասն մարկային ծննդեան, կենացն մանկութեան, երիտասարդութեան, միջահասակի, ծերութեան մինչի հասեալ մահը» կոչած թուքքերէն աշխատութիւնը, 128 տող, որ ոտանաւորով համառօտ պատմում է մարդու կեանքի վրայ, մանկութիւնից մինչև ծերութիւնը։

Խրատական երգեր։ Ուշագրաւ են նաև Յարթուն Օղլուի խրատական երգերը։ Նա իր խրատներով խորհուրդ է տալիս «ադամորդուն», որ ի՞նչ ասպարէզում էլ լինի, միշտ ուղիղ սրտով գործի՝ յիշելով Աստծուն։ Նոյնպէս խրատում է՝ լինել մարդով զօրեղ, սրտով ուրախ — պայծառ, խօսքով ընտիր, լեզուով համեղ, ինչպէս հեզ գառ։ Երգիչն ասում է, որ մարդ պիտի «ամեն մաչլսում կանթեղի պէս շողշողայ», որպէս զի «տեսնողն սարսափի, դողայ», հարկաւոր է նոյնպէս, որ մարդ, որտեղ էլ որ լինի, իր բերանը «քաղցրիկ բանայ» և «իմանայ խօսքի բանն»։ շատ խօսքը, կեղծիքը շուտով մարդուն «գետին կու տայ», մի խօսքով պէտք է «մարդս հաքիմ ըլնի՝ իւր դարդին, որպէս զի մոհթաջ չմնայ նա մարդին»։

Երգիծական։ Յարթուն Օղլին ունի նաև երգիծական մի ոտանաւոր, որի մէջ նա կատակելով զանգատւում է իր ուլի մասին.

«Էյ պարոններ մի ուլ ունիմ գառոտայ
Մին պտուկն քոռայ, մինն կաթ չունի.
Ջանն էլ քաչալայ հէնց գետի գառոտայ
Ձեռն խօ չօլախայ, յուսը կաթ չունի»։

Այս ոտանաւորը յիշեցնում է մեզ 19դ. դարի աշուղ Ազրար—Ադամին, որ գանգատւում էր իր այծից։

Միւս երգերը։ Յարթուն Օղլու միւս երգերից ուշադրութեան արժանի են երեք այլաբանութիւնները, որոնք տալիս փաստորեն տրամախօսութիւն են «հոգու և մարմնի», «երկնքի և գետնի», «համամի և ջաչացի»։

Ունի նաև հարանեաց, բարոյախօսական և մօտ 80ի չափ թուքքերէն երգեր, որով նրա երգերի թիւը հասնում է մօտ 200ի։

Լեզուն և ոճը։ Յարութիւն Օղլու երգերը գրւած են անմաքուր հայերէնով. նրանք ողողուած լինելով թրքերէն և պարսկերէն բառերով և արտայայտութիւններով՝ դժուարահասկանալի են դառնում, բայց և այնպէս այդ անորոշ լեզուն կրում է իր մէջ ժամանակի յատուկ ժողովրդի խօսակցութեան կնիքը և մասնաւորապէս ջուղահայ բարբառի գեղեցկութիւնը։

Ա. հասարակ Յարթուն Օղլուի թէ ոճը և թէ լեզուն գեղեցիկ են և պատկերաւոր։ իսկ նրա երգերը ձևի, կազմութեան և տաղաչափութեան տեսակէտից բաւական յաջող են։

Ընդհանուր հայացք։ Թէև Յարթուն Օղլին մեծ աշուղներից չէ, բայց և այնպէս, իբրև երգիչ—բանաստեղծ, իր երգերի մոտիւներով մեծ ծիրք է ցոյց տալիս և նա անպայման պատւաւոր տեղ է բռնելու մեր աշուղական գրականութեան պատմութեան մէջ։

© National Library of Armenia

*
* *

Բացի Յարթուն Օղլուց, կան և ուրիշները, որոնց երգերը դեռ կարօտ են ուսումնասիրութեան։ Այդպիսիներից կարելի է յիշատակել Բաղէր Օղլի, Ղուլ Յովհաննէս, Ղուլ Իշգազ, Ղուլ Արզունի, Ամիր Օղլի, Աբդին Օղլի, և այլն։

Ա՛ռ հասարակ սրանց երգերը արժանի են առանձին ուշադրութեան, և գուցէ մօտիկ ապագայում, կարողանանք նրանց էլ յայտնագործել։

ԲԱՌԵՐ

Սէրիա – տեսակ։ — Ֆերաք – մաքուր։ — Զառոսկէթել – խտուր – միասին։ — Զում – ինչու։ — Նահմաթ – ընորհք։ — Մախչուշ – խառնաշփոթ։ — Զահաթն – պատճառ։ — Շամս – արև։ — Քեալամ – խօսք։ — Գառառ – խոցոտ։

Նոր-Զուղա ԱՐ. ԵՐԵՄԵԱՆՑ

ԲԱ՛Մ… ՓՈՐՈՏԱՆԻ ԱՐՁԱԳԱՆԳԸ

ՅԱՐԸՆԶԱԲԱՐ

Միևնոյն եղանակով։ — Ձօն հայ քաջերուն

ԱԶԱՏ-ՄԱՍԵԱՑ ալքէն-ծալքէն՝ բիւր բոմբիւններ կը փողեն,
Մեր քաջերուն կարն ու կորովն առատազեղ կ՝ողողեն.
Հոգիներն Հայոց կ՝եփին ընդհանուր.
Է՛ հայրենիքի հրաւէրն՝ հեշտալուր.
Դուք որ կը սիրէք պըսակն երկընքի՝
Ու փառքը երկրիս որ վե՛ր կը տանի,
Ո՛վ դուք սերունդ վեհ Հայերու,
Ճեպենք մեր վրէ՛ժը հանելու.
Մէ՛ն Հայ զէնքի թող փութայ,
Թող Հայ շիրիմն իսկ թընդայ.
Ուսերամերկ սուրանք յառաջ,
Վրէ՛ժ լուծելու, ո՛վ Հայեր քաջ,
Երթանք յառաջ,
Վէ՛ս՝ քաջալանջ,
Դիմենք յառաջ,
Ցառաջ յառաջ,
Վազե՛նք յառաջ։

ՀԱՑ գունդերու գալարափողն որոտընդոստ կը գոչէ.
Խրժդրժալուր ազգաց շեփորն՝ ա՛հը կրռուին կը կոչէ.
Հրեշտակներն ուրախ կը ցընծան պարեն.
Դևերը կ՝ողբան դրժոխքի խորէն.
Վրէժխընդրութեան շեղ շանթն երբ ճայթի,
Պիտ՝ սարսեն այսերն, ո՜հ, սև խոլ մութի.
Ո՛վ դուք սերունդ, — և այլն, տե՛ս վերև։

© National Library of Armenia